



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԵԴԱԿՏՈՐԻ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻԱՅ ԴԱՐԱՐ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1877 ԹԻԻ 1073

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օսմանեան կայսրական զօրաբանակին հետ-
գնեալ տարած փառաւոր յաղթութիւնքն 'ի
վերայ Ռուսաց՝ մեծապէս և աներկայելի կեր-
պիւ հաստատեցին զզինուորական հզօր զօրու-
թիւնն թուրքիոյ, որոյ 'ի վերայ խիստ սխալ
տեղեկութիւն ունէր Եւրոպան և մասնաւորա-
պէս Ռուսիան : Իրաց այս յաջող վիճակն՝ որ-
չափ որ Օսմանեան կայսերութեան համարուեալ
կաւելցնէ իբրեւ զինուորական հզօր տեղութիւն
մի, նոյնչափ Ռուսիոյ՝ ըստ այսմ մասին ունե-
ցած համարումն կըսկարացնէ : Վասնորոյ ոչ գոյ
տարակոյս թէ Ռուսիան պիտի չարունակէ զպա-
տերազմն վերջին ճգամք և որոշեալ է անցու-
ցանել զձմեռն 'ի գետեզերս Դանուբի :

Պուրքէշէն ամսոյս 5—17էն արձակեալ հե-
ռագիր մի կըծանուցանէ թէ պատերազմական
խորհուրդ մի տեղի ունենալով 'ի նոյն մայրա-
քաղաքն ընդ նախագահութեամբ Զարին, յիշ-
եալ խորհուրդն յայտնեց թէ այժմեան պարա-
զային մէջ անկարելի է վասն Ռուսաց զօրաբա-
նակին, որ յարձակողական դիրք մի բռնէ :
Նմանապէս վէճնայէն կըծանուցանեն թէ Կորթ-
լաքօֆ իշխանն Պուրքէշի մէջ երբ իմացեր է
զձախորդ լուրն պատերազմին, մեծապէս յուզ-
ուեր ու աղաղակեր է այսպէս, «ուրեմն մեր
կացութիւնն յուսահատական է» :

Լոնտոնի Տէլի—ՆիիՍ օրագիրն Պուրքէշէն
ամսոյս 6—18 թուականաւ յուզարկեալ հեռա-
ռագիր մի կըհրատարակէ, որ լուր կուտայ թէ
Դոթլըպէն Ռուս զօրապետն, որ զինուորական
ճարտարապետութեան տնօրէնն է, հրաման ըն-
կալաւ պատրաստելու զյատակագիծսն՝ ձմեռ-

ուան տեղեր հաստատելու վասն զօրաբանակաց
'ի Մաթլին, 'ի Հիրչովա, 'ի Սիսթովա և 'ի Նի-
քոպոլիս՝ ինչպէս նաև կամուրջի զօրաւոր գլուխ
մի հաստատելու այս վերջին քաղաքին մէջ :

Ի Կ. Պօլսոյ 'ի 11էն ամսոյս կըգրեն թէ ձե-
րիճէի ԱՍԳԵՐԻԷ օրագիրն մինչև նոյն օրն պաշ-
տօնական օրէնք լուր մի չէ հրատարակած Պիե-
լայի ճակատամարտին վրայօք : Բայց ըստ մաս-
նաւոր հեռագրոց նոյն ճակատամարտը կըչա-
րունակէ : Շիփքայի մէջ իրաց կացութիւնն մի
և նոյնն է և նշանաւոր փոփոխութիւն մի չկայ :
Դարձեալ 'ի Կ. Պօլսոյ 'ի 12էն ամսոյս կըգրեն
թէ Շէփքէթ փաշան՝ առ ինքն հասեալ օգնա-
կան զօրաց գլուխն անցնելով՝ կըյառաջանայ
դէպ 'ի Բէլֆնա . յորմէ առ այժմ երկու ժամ
հեռու կըգտնուի : Իսկ Օսման փաշան կըչարու-
նակէ քաջութեամբ և յաջողութեամբ դէմ դը-
նելու թշնամոյն :

Լոնտոնի թուրք օրագրոյն գրածին նայելով՝
Ռուսաց զօրագնդերն յետ այսորիկ պիտի չկրնան
չարունակել զյարձակումն Բէլֆնայի բայց միայն
զինուորական ճարտարապետութեան (génie) մի-
ջոցներով և խրամներով, որովհետեւ իրենց պա-
հաստի բոլոր զօրքն արդէն գործածուեցան :
Վերջապէս կերելի թէ Ռուսաց կրած կորուստ-
ներն այն աստիճան տկարացուցին զզօրաբանակ
իրեանց, որ այժմ բաւական չէ չարունակել
զյարձակումն ճակատամարտի : Հարկ կըհամա-
րիմք նշանակել այստեղ, կըյաւելու յիշեալ
անգղիական թերթն թէ Բէլֆնա բերդաքաղաք
մի չէ, այլ բանակի վերաբերեալ աշխատու-
թեամբ ամրացեալ դիրք մըն է . ուստի կերելի
թէ Ռուսք իրօք ծանր վնասներ կրած պիտի
լինին Բէլֆնայի առջև, եթէ ստուգիւ պարտա-
ւորեալ են այս ամրացեալ դիրքին կանոնաւոր

պաշարումն ընելու, որպէսզի կարող լինին
ձեռք ձգել զայն :

Հանգուցեալ մօտիւ թիէր գաղղիացի մեծա-
նուն քաղաքագիտին առ մի բարեկամն իւր
գրեալ մէկ նամակը հրատարակեալ կըտեսնեմք
վերոյիշեալ թուրք օրագրոյն մէջ : Նոյն նա-
մակէն արժան կըհամարիմք քաղել զհետեւեալ
տողսն՝ որք Արևելեան խնդրոյն այժմեան վիճա-
կին կըվերաբերին : «Ահա թուրքերն յաջողու-
թեանց շաւղին մէջ են . բայց Եւրոպան անիրաւ
եղև նոցա դէմ . քանզի արգարութիւնն և բո-
լոր աշխարհիս հաւասարակշռութեան ճշմարիտ
օգուտն նոցա հետ էին : Ուստի Եւրոպան մե-
ծապէս պիտի զղջայ անպաշտպան թող տարուն
համար զթուրքերն : Զայս ասեմ 'ի պատիւ բա-
նաւորութեան և հեռաւոր նախատեսութեան :
Ներկայ խաղաղութեան՝ տեսութեամբ անշուշտ
փափաքելի է մօտաւոր կարգադրութիւն մի .
բայց տակաւին չեմ տեսներ զմիջոցներն նոյն
կարգադրութեան . վասնզի յաղթեալ Ռուսքն
աւելի ծանր պահանջմունք պիտի ունենան քան
զյաղթող Ռուսքն : Կերկնյիմ 'ի հետեւանաց
երկրորդ պատերազմի մը . վասնզի՝ ինձ այնպէս
կերելի թէ այս տարուան պատերազմն բաւական
չէ առ ի հանդարտեցուցանել զԱրևելքն» :

Ամենայն ուրեք՝ 'ի Վէննա, 'ի Պէրլին 'ի ֆա-
րիզ, նմանապէս 'ի Բէլգրադով և 'ի Կ. Պօլսոյ,
համոզեալ կերելին այժմ թէ պատերազմն պիտի
չկրնայ վերջանալ նախքան զձմեռն՝ որ և լիցի
վախճանն սոսկալի մաքառման, որ տեղի ունի
Բէլֆնայի չորս կողմը : Թէև 'ի բազմաց հետէ
Եւրոպիոյ գլխաւոր օրագիրք կըգուշակէին զայս,
և Ռուս զօրապետք արդէն այնպիսի պատրաս-
տութեանց ձեռք վարկած են, որք կըյայտնէին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆՔ
(Բաճալ 'ի ՄԱՍԻՍ ԼՄԳՆԷ) :

Մուրատեան վարժարանի պատմութիւնն ունի
ուշով կարգացիւք : Իբրեւ պատմական երկ՝ մեծ
թերութիւններ ունի այդ գործը, բայց մեծ
արժէք ունի իբրեւ հայելի բարուց Մխիթարեան
Միաբանութեան, իբրեւ նկարագիր ազգային
գործոց վիճակի և մանաւանդ իբրեւ միջոց Հայոց
աղքատ մանկուոյն կապտուած իրաւանց պաշտ-
պանութեան : Այդ գործը Մխիթարեան միա-
բանութեան դատապարտութիւնն և իր բազ-
մալիշտ հեղինակին ջատագովութիւնն և միան-
գամայն դատապարտութիւնն է : Այդ պատ-
մութիւնը հրատարակելով բազմադիւրն հեղի-
նակը ջանացած է նախ ինքզինք արդարացեալ
ազգին ընդհանրութեանն տուլ, երկրորդ ազ-
գին կապտուած իրաւունքը պաշտպանել և
ձանջնել, թէև բաւական ուշ, ըստ առածին
պաշտպան քան երբէք : Մենք դիտա-
ւորութիւն ունինք այդ գործին համառօտ բո-
վանդակութիւնը ներկայացնել հասարակութեւն,
հանդերձ քննադատութեամբ, բայց առայժմ
կարևոր կըհամարիմք քանի մը դիտողութիւն
ընել Ռաֆայէլեան և Մուրա . հրատակաց մասին :

Մեր մէջ այժմ հասարակաց կարծիքն այս է
թէ ինքրոյ տակ եղածը միայն Մուրատեան
վարժարանն է, և թէ Ռաֆայէլեան վարժարա-
նը Մխիթարեան միաբանութեան անկապտելի
անպահանջութիւնն է : Բայց միթէ ասկէ քանի
մը ասարի առաջ Մուրատեան վարժարանի մա-
սին ալ նոյն կարծիքը չունէր Հայ հասարակու-
թիւնը : Մխիթարեան միաբանութիւնն ու Հոռո-

մէական Հայերն երկար տարիներ այնչափ ճիգ
թափած են այդ վարժարաններն իբրեւ իրենց
սեփականութիւնը ձանջնել մեզ, որ մենք ալ
մեր պապեանական պարզամտութեամբ բոլորովին
հաւատացած ենք թէ իրօք այդպէս է : Յայտնի
է որ աշխարհիս վրայ ամենէն դիւրին բանն է
Հայուն հասկնել թէ ինք իրաւունք չունի և
ընդհակառակն ամենէն դժուար բանն ալ է
Հայուն հասկնել թէ ինք իրաւունք ունի : Թէ
որ իրաւունք չունի ալ վստիկանի մը մէջ կրնաս
հասկնել, իրաւունք ունի ալ հասկնելու հա-
մար երբեմն տարիներ պէտք են : Այսպէս եր-
կար տարիներէ ետք Հայերն սկսած են հասկը-
նալ թէ իրենք ալ իրաւունք ունին Մու-
րատեան վարժարանին վրայ, բայց դեռ մտքեր-
նէն անգամ չանցնիր թէ նոյն իրաւունքն ունին
և Ռաֆայէլեան վարժարանին վրայ : Այս վար-
ժարանի մասին Հ. Թէոդորեանի կարծիքն ալ 'ի
նպաստ Մխիթարեան միաբանութեան է . բայց
տեսնենք թէ աղա Հէդվարթ Ռաֆայէլի, այս-
ինքն նոյն ինքն Ռաֆայէլեան վարժարանի հիմ-
նադրին կարծիքն ինչ է : «Եւ . . . ասացեալ
չահն դարձուցի 'ի գլուխ դրամոյ դպրատան
միոյ վասն աղքատ մանկանց Հայոց . . . Եւ այս
են իմ կամք, զի վերապատուելի Հ. Ն. Բուդայ-
եան կարգեսցի ուղղիչ և գործադիր գործոց
դպրատանն զամենայն ժամանակս կենաց իւրոց,
և տալի նմա իշխանութիւն կարգելոյ զյաջորդ-
իւր, առնել և կատարել զասացեալ կարգա-
դրութիւն իմ» : Բարեբար հիմնադրին խօսքե-
րէն սա միայն կըհասկցուի թէ իր կամքն է Ա.
աղքատ Հայ մանկանց համար դպրոց մը հիմնել
Հ. Նիկողայոսի ձեռքով . Բ. տեսչութիւնը Հ.
Նիկողայոսին յանձնել . Գ. իրեն յաջորդը կար-
գելու իրաւունքն ալ Հ. Նիկողայոսին յանձնել :

Սակայն ամեն ոք գիտէ որ Ռաֆայէլեան
վարժարանին հիմնադրուած օրէն ցարդ անոր
նպատակը ճշդիւ 'ի գործ դրուած չէ : Մխի-
թարեան միաբանութիւնը զայն իր նպատակին
միայն ծառայեցուցած է . այսինքն գլխաւորա-
պէս «աղաք» Հայոց տղաքը ձրի ընդունած է,
էրեքսիւններէն ընդունած համեմատաբար քիչ
տղաքն ալ «աղաք» ընելու պայմանաւ ընդու-
նած է : Թէպէտեւ աղա Հէդվարթ Ռաֆայէլի
Լուսաւորչական ԼԵԼԼԵԼ հաստատ չենք գիտեր,
բայց սա ստոյգ է նախ որ այն ժամանակ (1799ին)
հռոմէական Հայերը Լուսաւորչականներէն դեռ
չէին բաժնուտ, և երկրորդ թէ կտակագրին
կամքն, ինչպէս վերը տեսանք, «ոչ աղաք»
Հայ աղքատ տղոց համար, և ոչ Էրեքսիւն Հայոց
տղաքն «աղաք» ընելու համար դպրատուն
հիմնել էր : Եթէ այդ բլլար իր կամքն, անշուշտ
այնպէս ալ յայտնած կըլլար իր կտակին մէջ :
Մխիթարեան միաբանութիւնն 'ի սկզբանէ
ցարդ կտակագրին կամացն հակառակ վարուած
է . ուստի Հայոց ազգին իրաւունքն է համար պա-
հանջել միաբանութենէն, կամ մերայնոց աւելի
հասկնալի լեզուով խօսելով, Հայոց պարսն է ի-
րենց իրաւունքը պաշտպանել ընդդէմ Մխի-
թարեան միաբանութեան :

Գանք հիմա Մուրատեան վարժարանին :
Ս. Մուրատ անզուգական ազգասիրին կտակը
մէջ բերելու հարկ չկայ, արդէն ամեն ոք գիտէ
որ նորա կամքն է եղեր Հայոց ազգի որդ և աղ-
քատ մանկանց համար դպրատուն հիմնել, «ըստ
խորհրդոյ և միջնորդութեան վենետիկ հարց
միանձանց» :

Մուրատեան վարժարանի խնդրոյն մէջ Մխի-
թարեան միաբանութեան ընթացքն ալ աւելի
դատապարտելի է : Մուրատայ ժառանգները

որպիսի որ փերտերը բռնկողնին, թուրք զօրակազմը ալ անոնց հետ միասնալով աւարտութիւն ըրին։ Դուռն այս գործին վրայ անկողնակալ և ճիշդ քննութիւն մ'ընել և յանցաւորները խոտիւ պատժել խոտալաւ։ Երես թէ Սեդիկի վեհա թագուհոյն կառավարութեան զիտողութիւններուն վրայ է որ յուսացից խոտաւորներ արուեցան, որոց համար ինքն և իւր ժողովուրդը մեծապէս շնորհակալ են։ Բայց երջանակ բնական թէ մինչև ցարդ գործադրութիւն գտան։ Այս բանն անհաճօք քաղաքներուն մ'ըրաւ։ Հայոց վրայ թուրք կառավարութիւնը պէտք չէ մեռնայ թէ Հայոց Պատրիարքին մին որ մեծ ազդեցութիւն ունի Հայոց ազգին վրայ, չ'միտմայ Պատրիարքը քոսովոյ շատաւի է և թէ Ռուսիա իւր Հայաստան արեւոյ թանակներուն մէջ գիտմամբ քառահոթ թանք արշաւաններ առած է Հայոց որպիսի Հայ քրիստոնէից համակրութիւնը գրաւէ։ Նորին Սրբազնութիւնը կրկարծէ թէ Ռուսերը բնաւ յաջողութիւն չեն կրնար դնել և թէ Դուռը Հայերն իրենց կենացը ընկնի և պատւոյն մէջ արդարութեամբ կառավարելու գիտաւորութեան փորձեր տալ ուզէ։ Եւ թէ Դուռն այսպէս ընէր, կրնար քաղաքային կամ ազգային զինուորութիւն մը կազմել։ Հայոցմէ որք պատրաստ կըլլային իսլամաց հետ երկիրը պաշտպանել Ռուսաց յարձակման դէմ։

Բայ Պատրիարքին թէ իւր տուած տեղեկութիւնները մեծ գոհութեամբ լսեցի։ Իմ կարծիքս այս եղած է միշտ որ եթէ Սուլթանն երկիրը իրաւութեան մէջ իւր քրիստոնէական հզօրակց իրաւամբ պէտք եղած մասնակցութիւնը տար, զանոնք կատարեալ հաւասարութեան միջակի մէջ դնէր իսլամաց հետ, ինչպէս որ իւր շահն իսկ պարտք կըզնէ իւր վրայ, Հայերը կարնոր մասնակցութիւն մը կ'ունենային թուրքոյ կառավարութեան, և մեծապէս կըբարբաւեցին։ Հայերը մանուսորայէս նպատակաւ որ դիրք մ'ունին, և իրենց քաղաքական կարողութեամբ կամ նախանձ չեն ազգեր թուրքայ։

Խոստացայ Նորին Սրբազնութեան որ ձեռն բկած ջանքն ընեմ՝ վանայ գործերուն վրայ շնորհիւն բանալու և յանցաւորաց պատժութիւնը բերելու համար։ Հրաման ըրի Սանտի-քիին որ հասկցնէ Սաֆիւթ փաշային թէ որպիսի արկաւ որ և թուրք կառավարութեան ալ շահաւոր է Հայերը գոհ ընել՝ վանայ մէջ գործառնած ինչամանաց հեղինակները պատժելով, և այսպէս փութով յուսնել թէ իրենց իրաւատար պաշտպանութիւն շնորհելու հաստատ գիտաւորութիւն ունին։

(Ստորագրեալ) ԼԵՅԱՐՏ

աւարտութեան առջև առնելով վարպետութեամբ, սոյն խառնութեան պարագլուխ եղող Տիւնա տը Պէրրի կինը, յաջողեցաւ ձեռքակալ ընել նաև Անվերտ քաղաքին բերդը գրաւելով արաքուստ Պէլիկոյ ինքնիշխանութիւնը վստահութեան ներքև դրաւ։ Վարչութեան փոփոխման առթիւ Մ. Թիէր հասարակաց շինութեան պաշտօնեայ անուանելով, սոյն պաշտօնէութեան մէջ բազմաթիւ գործեր տեսած է։ Լուի Ֆիլիբի Բուրժուէ Բագա-մանկանունը տուող հասարակաց շինութեան պաշտօնէութիւնը Մ. Թիէրի որով սկսաւ։ 1834ին սորէն ներքին գործոց պաշտօնեայ անուանեցաւ։ 1836ին պետական ժողովոյ նախագահ, և յետոյ արտաքին գործոց տեսուչ։ Սակայն իր նախագահութեան տակ շնորհով վարչութիւնը միևնոյն տարին ինչալով թիէր մինչև 1840 առանց պաշտօնի մնաց, և այն տարւոյ սկիզբը դարձեալ սկսաւ կառավարական գործերով զբաղիլ։ Յիշեալ 1840 տարին Մ. Թիէրի պատմական կենաց մէջ, գրեթէ առաջին տեղը բռնած է։ Որովհետև Եգիպտոսի խռովութիւնը Մէհմետ Ալի փաշային իրմէ զատ ընկալաւ պաշտպանող մը չ'գտնուելով, տեսաւ որ համայն Եւրոպա Ֆրանսայի գէմ կըդաշնակցի, այս պատճառաւ բոլոր զօրութիւնը ի մի հաւաքելով փարիզի շուրջը պարիսպներով պատնշուաւ։ Եւ թիւ օրուան մէջ պատերազմի ձեռնարկութեան սկսելու պէս, զինուորական զօրութիւնը կատարեալ միջակի հասուց։ Սակայն ինչ օգուտ որ կ'ընէ հակառակորդ էր իրեն և թող աւարին անվստահութեան պատճառաւ չկոնալով գործը տեսնել, հրաժարեցաւ։ 1845ին Դոմի-լէ և Սուլթանն պատմութիւնը սկսաւ գրել, և

կեդրոնական ազգային վարչութեան խառն ժողովոյն Օգոստոսի 26 նոտին մէջ Պատրիարքական ֆոնտանորդ գերաւ տէր Յօ. Մկրեան աւագ քահանայն հետեւեալ բողոքը մատուցած է։

Սո պատկառելի ատեն ազգային վարչութեան Լիթօ և Քաղաքական խառն ժողովոյ։

Անցեալ շաբթու, Օգոս. 19, ուրբաթ աւուր Ազգային ժողովոյ մէջ երեսփոխաններէն փափազեան Ստեփան Էֆէնտի ինձ գէմ ըրած յարձակումն գիտէք արդէն։

Այն անիրաւ և անվայել յարձակումն Ազգ. ժողովոյ մը արժանապատուութեան և նոյն իսկ ընդհանուր ազգին համեմատութեան դէմ ըլլալով թեպէտ նոյն ժողովոյ մէջ բողոքելու պատրաստ եմ, սակայն Փափազեան Ս. Էֆէնտի որովհետև սա խօսքն ալ արտասանեց թէ Պատրիարքարանը պիտի չ'լքէ, և վէրիք կաշառակուլ է, և թէ վայ այն Հայուն որ փոխաւորարանի հետ գործ ունի և անտէր է, և թէ այնպիսի յայտնութիւններ պիտի ընեմ և փոխանորդ արանի գէմ, որ սոսկում որիտի և պատճառ է։ Եւ այն քիտքերը կրնամ, ուր զսկի Ազգային վարչութեան ուշագրութեան արժանի ըլլալով, նախապէս պատկառելի խառն ժողովոյ առջև կըբողոքեմ։

Վանդի գոթ, Տեարք իմ, ազգին վարչական ժողովոյ էք և գործ ունիք միշտ Պատրիարքարանին հետ, Ս. Պատրիարքին և անոր փոխանորդին հետ։ Եթէ Պատրիարքարանը պիտի չ'լքէ եղած է, դուք ևս անոր մէջն էք։ Եթէ Պատրիարքական փոխանորդը կաշառակուլ է, Ազգ. ժողովութիւնը նորա կամակից, և նոյն իսկ ամենապատիւ Ս. Պատրիարք հայրը համալիր եղած կըլլայ աչք գոցելով վէրիքն այն ամեն սոսկալի գործոց, զորս Փափազեան Ստե. Էֆէնտին ազգային բարբարոս կը յայտնէ։

Արդ՝ կըհրաւիրեմ՝ զպատկառելի ժողովոյ պահանջել Ազգային Պատրիարքարանի պատիւը պիտի չ'լքէ անարդ անունին դէմ։

Պահանջել Պատրիարքարանի փոխանորդութեան պատիւն, որ նոյն իսկ ազգին և տէրութեան համարունն իրաւամբ գրաւող սրբազան Պատրիարքին պատիւն է։

Հայաստի նախապէս պատկառելի ժողովոյ հետ մէկտեղ պահանջելով՝ աստիկ բողոքմամբ կըպահանջեմ նաև իմ անձնական պատիւս, որ իմ արեանս գինն է։ Եթէ փափազեան Ստեփան Էֆէնտին կարող է, թող օրինաւոր ամբաստա-

նաղի մատուցանէ իմ կաշառակութեանց և այլ սոսկալի գործոց համար, և ես պատրաստ եմ հրապարակաւ դատուիլ։

Տեարք իմ,

Եթէ տարի շարունակ ամեն անձնակրութեան և ինքնով ինքնի ազգիս ծառայելէ զինի չեմ կրնար հանդուրժել որ այս օրինակ անուանարկութեամբ և անարգութեամբ թողում իմ պաշտօնս, այլ յետին շունչ բողոքելով, ընդունելիւն և պատաստան կըպահանջեմ։ չէ թէ միայն իմ իրաւունքս և արդարութիւնն յերևան ածելու համար, այլ ազգը ազատելու համար այս սահմանադրական քաղիներք բռնակալութեան խաղաղի ըլլալէ, որոյ գործն եղած է միշտ Պատրիարքին և ժողովներ տապալել, և հանդարտ ու խաղաղազգն երկպառակութեան և խռովութեան մէջ աշկոծել։

Արդ՝ մինչև Ազգային ժողովոյ դումարման օրը սոյն բողոքագրոյ ամեն մէկ կէտերուն վրայ խորհիլ ջեր իմաստութեան կը յայտնեմ։

Եւ սրպէս զի Ազգային ժողովոյ մատուցանելով խորքային պատկառելի ատենիդ, յանձնարարեալ տեսնել զիտութիւն ունենալ, այժմէն կրննդ իմ որ ՆՍՐ ԳԱՐԻ իմագիր խօսաւորեան Օգոստ. Էֆէնտին խառն ժողովոյ ատենի կոյէք, որպէսզի այն ալ փոխանորդարանի վրայ իւր հրատարակած գայթակեցուցիչ յօդուածներուն վրայ բացատրութիւն տայ, և ամեն բան յայտնուի թէ ով է որ Պատրիարքարանն օրինաց և բարոյականի ուղիղ ճանքէն խոտորեցնելու համար ամեն ճիգ և հնարք կը թափէ իւր անձնական շահուն համար։

Մնամ և այն

Յովհաննէս Դաւանայ Մկրեան։

Կ. Պօլսոյ ազգային ժողովոյ ատենապետք Ազգին կողմանէ առ օգոստոսիա Սուլթանն մատուցանելի ուղերձն Մեծ-Եպարքոսին յանձնելով, Նորին Բարձրութիւնն զինի խոտաւալով թէ ամենայն յօժարամտութեամբ պիտի մատուցանէ զայն վեհա կայսեր այսպէս յաւելուց։

«Համայն ազգն Հայոց իւր Պատրիարքին հանդերձ թէ օգոստ. Սուլթանին և թէ իւր կառավարութեան համակրութիւնն և փոխանութիւնը գրաւած են։ Թէ Պատրիարքին ստացած Օսմանիէ պատուանշանը՝ իւր իմաստութեանը և ու արժանեացը հետ բաղդատմամբ չատ քիչ է, գայելով իր նպատակին չկրցաւ հասնիլ, և վերադարձն Թրանսա դառնալով 1871ին երբ խաղաղութեան դաշինքը կնքուեցաւ՝ ի Պօրտո Կուստանդնուպոլիս ժողովոյ կողմանէ՝ գործադիր վարչութեան ղեկի և պետական խորհրդոյ նախագահ ընտրուեցաւ։ Իր այս կրկին պաշտամանց մէջ բազմաթիւ դժուարութեանց դէմ կռուեցաւ՝ այնպէս որ ազգային ժողովոյ մէջ օր քստ օրէ թագաւորական կուսակցութեան ըստուարանք տեսնելով, օտարութեամբ ասոնց դիմագրաւել և Ֆրանսայի մէջ ասկէ վերջը հասարակապետական դրութեանէ ի զատ, ուրիշ գրութեան մը գոյութիւնը անկարելի է՝ ըսաւ։ Այն օրէ սկսաւ հասարակապետութեան հաստատութեանը աշխատիլ, և Մարտ ամսոյ մէջ հասարակականաց (commune) համաժողովուրդը բռնութեամբ մարտնչելով, Գերմանիոյ զինուորաց Թրանսայի հողը թողու համար հարկ եղած պատերազմական տուգանաց ահեղ դումարին պատրաստութեանը աշխատելով սոյն նպատակն ալ ի կատար հասուց։ Մ. Թիէրի սոյն պատերազմական տուգանաց օրինաւոր կերպիւ հատուցմանը մասին հայրենեաց ըրած ծառայութիւնը մեր օրերու մէջ անմասն է կրնայ ըստ իւր վերջը նախագահութեանէ ինչալով, իրեն յաջորդեց Մագ-Մահման մարալապետ։ Մ. Թիէր իր հասարակապետութեան նախագահ անուանուած օրէն մինչև մահը աշխատեցաւ մէջ պատուած բուրք քաղաքագիտաց նշանօրը կոչուած է։

Պատկառելի հանդուցեալ, կայսրութեան անկման տարեգարծին հանդիպող, 1877 տարւոյ Սիպոսեմբեր ամսոյ գորդ օրը 80 տարեկան և 5 ամսուան հասակի մէջ ըլլալով՝ մեռաւ։

1862ին իրացուց զայն։ Այս ժամանակներն անգամ բողոքովն ազգային ինդիքներէ ձեռնարկ չեղաւ։ 1843էն մինչև 1847 ստեպ ազգային ժողովոյ նիստերուն ներկայ գտնուելով, Մ. կիզդի գէմ եղաւ, և զանազան խնդրոց վրայ անոր հետ մաքառեցաւ։ 1848ին անձամբ իրագաւորին կողմանէ կոչուեցաւ, որպէսզի նոր վարչութիւն մը կազմէ։ Բայց քանի մը ժամ բանակցելէ վերջը թողուց զնաց։ Հասարակապետութեան ատեն Սէն գաւառին կողմէն երեսփոխան ընտրուեցաւ, և Դեկտեմբեր 10ին Լուի Նաբոլէոնի նախագահութեան աթոռը բարձրանալուն համար քուէ տուաւ։ Այս առթիւ էր որ Պիքսիոն անուն մէկու մը հետ մենամարտութիւն ըրաւ։ Վանդի այս վերջինը իրեն ըսած էր թէ Բիշու համար Լուի Նաբոլէոնի քուէ կըտայ։ Քանի որ անոր զխառը հակառակորդներէ մին էր՝ Մ. Թիէր 1852ին կառավարութեան հոգեւոր քաշուելով, նորէն գրականութեամբ զբաղեցաւ։ Իսկ 1863ին Սէն գաւառէն վերադարձն ազգային ժողովոյ երեսփոխան ընտրուեցաւ։ Պիւստէնները (հայտնակշիւք) վիճարկութեան և քննութեան տակ առնուած ժամանակ օտար վարչութեանը և գանձարին գործոց վրայ առնալով իրենցը մեծ համբաւ առացած են։ 1870ին քրտաբողոքի հրատարակման գէմ կենալով և այն ժամանակուան ըրած գուշակութիւնները՝ ամենուն յիշողութեանէ մոռցուած չեն։ Որպիսի որ ազգային պահանջանք իշխանութեան հետ հակադրութիւն կըզանուէր, սակայն անոր հետ միատեղ հայրենեաց ծառայելէ ետ չկեցաւ։ և այս միջոցին Թրանսայի գաշնակից գտնելու մտք բողոք Եւրոպան չըլա-

և թէ Հայոց Ազգը բարեբաղդ համարելու է ինքզինքն՝ այսպիսի արժանաւոր և խոհական գլուխ մի ունենալուն համար :

«Օսմանեան զինուոյ յաջողութեան համար Պատրիարքին բրած ջերմ բարեմաղթութիւնքն ընդունելի եղած են առաջի Աստուծոյ , և Օսմանեան զէնքերն նշանաւոր յաղթութիւններով ու յաջողութեամբ փառաւորուիլ սկսած են : Ուստի կապահովենմ զձեզ , որ շնորհիւն Աստուծոյ քանի մ'օրէն ամեն բան կարգադրուելով՝ խաղաղութիւնն և անդորրութիւնը պիտի վերահաստատուին» :

Յունաց Ս. Պատրիարքին կողմանէ երէկ (6 Սեպտ.) երկու Մետրապօլիտ 'ի Պատրիարքարանն գալով՝ 'ի գիմաց Նորին Սրբազնութեան շնորհաւորեցին մեր Ս. Պատրիարքը՝ Օսմանիէ պատուանշան շնորհուելուն համար : Պատրիարքն անձամբ պիտի գայ եղեր , բայց անձնական տրեկարութեան պատճառաւ չէ կրցեր գալ :

Մեր Ս. Պատրիարքը թէև քիչ մը անձնապէս տկար , բայց ներկայ գտնուեցաւ 'ի Պատրիարքարանն և արժանաւայել յարգանք ընդունեցաւ զանոնք :

ՓՈԽԱԶ

Ազգասիրական ուրախութեամբ կիմանամք թէ եգիպտոսի բարձրաւորութիւն բարեհաճեալ է Օսմանիէ կարգին երրորդ աստիճանի շքանշանն իւր ձեռքն շնորհել Ջմիւռնացի Յակոբեան վեսթաղեոսին : Պէշին բնակելոյ յԱլէքսանդրիա , յապացոյց իւր բարձր գոհունակութեանն և 'ի վարձատրութիւն գործունեայ և հաւատարիմ ծառայութեանց մատուցելոյ 'ի նմանէ բարձրապատիւ խնդիրին , որոյ առջև այս պատճառաւ մեծ շնորհ գտած է :

Ս. Պատրիարքը Օսմանիէի պատուանշանը ստանալուն նախքնեաց օրը ներքին գործոց պաշտօնեայ ձեւովեթ փաշայի երթալով , Ալաշկերտի շրջակայքերը անթիւ բռնութիւններ ու վայրագութիւններ գործող Շէյխ ձեւալէտտին արիւնհարբուքտին անպատճառ մայրաքաղաքս բերուելով՝ այլոց օրինակ ըլլալու կերպիւ պատժուելու հարկին վրայ թախանձելով պնդելուն առթիւ , յայտնած էր նաեւ 'ն. վսեմութեան թէ Ասիոյ կողմերը Հայ ժողովրդոց վրայ ուրիշ խել մը ֆիւրտ գլխաւորներուն գործած հարստահարութեանցն ու բռնութեանցը մէկ յիշատակագիրը պատրաստած ըլլալով , երբոր կամի և հաճի Նորին վսեմութիւնը՝ պատրաստ էր իրեն ներկայացնելու :

Ձեւովեթ փաշա լուր զրկելով անցեալ շաբթու Պատրիարքարան , թէ Ս. Պատրիարքին բրած 'ի ֆրտերուն չարագործութեանց այդ յիշատակագիրը կուզէ տեսնել և իմանալ , շաբաթ օր Պատր. փոխանորդ Միլեան հայրը անձամբ զայդ ֆարձրագոյն Դուռը տանելով ձեւովեթ փաշային կենեկայացնէ :

'ն. վսեմութիւնը մի առ մի և ուշի ուշով յիշեալ մանրամասն տեղեկագիրը աչքէ անցնելէն ետեւ , որոյ մէջ Շէյխ ձեւալէտտինի բրած խեղճութիւններն ալ նկարագրուած էին , զարմանօք կը հարցնէ փոխանորդ հօր թէ , այդ Շէյխ ձեւալէտտինը տակաւին Ալաշկերտի կողմերն է մի , մինչդեռ ինքը կ'կարծէր թէ ասի վերստին Տիեարպէքըր գարձած էր , ուրկէ որ եկեր է եղեր :

Փոխանորդ հայրն ալ նոյնպէս զարմանք կը յայտնէ Շէյխ ձեւալէտտինի գեռ այն կողմերը գտնուելուն նկատմամբ : Վսեմա. նախարարին տեղեկութիւն չունենալուն վրայ , և յայտնելով թէ այդ Տիեարպէքըրէն եկող ֆիւրտերն ալ ուրիշ են , ինչպէս Շէյխ Սապատուլլահ , Շէյխ Սալահէտտին և այլն , վերստին կը խնդրէ որ միւս ֆրտաց չարագործութեանցը վախճան մը տրուելով հանդերձ , նաեւ այդ արիւնհարբու Շէյխ ձեւալէտտինն ալ հոս բերուելով պատժուելուն ջանադիր գտնուիլ բարեհաճի :

Ձեւովեթ փաշայի տուած յուսալիր և վստահացուցիչ խոստումները փոխանորդ հայրը լսելէն 'իտայ' Պատրիարքարան կը դառնայ : ԼՐԱԳԻՐ

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԻՔԻ

Ջմիւռնիա , 17 Սեպտեմբեր :

Ոստիկանութիւնը յաջողեցաւ ձեռք ձգելու վեց եղեռնագործս , որք զիւրազգի էքմէքճի պաշը Մէհմէտ աղան լեռք տանող և սպաննող աւազակաց խմբին կը վերաբերին : Սուքա քրիստոնեայ են Ջէյպէքի հազուստով ծալտեալ , որք վախ ու սոսկում կը պատճառէին Նիֆի մէջ և նորա մօտաւոր տեղուանքը : Ոստիկանութիւնն նմանապէս ձեռք ձգեց նպարաւաճառ(պագալ) մի , որոյ խանութն տեղական իշխանութեան պալատին քովն է և զէնք ու վառօդ կը հագար բոլոր այս չարագործաց :

—Շաբթուս առջի օրերն արտաքոյ կարգի տաք ըրաւ և Ռէոմուրի ջերմաշափն 28 աստիճան կը նշանակէր . բայց հինգշաբթի օրէն սկսեալ օդն՝ որ ամպամած է , բաւականապէս զովացաւ և այսօր յիշեալ ջերմաշափն 21—22 աստիճան կը նշանակէ :

—Պարսից ընդհանուր հիւպատոս 'ի քաղաքիս՝ Շէյխ Մէհմէտ—Պէշին հինգշաբթի օրն 'ի Կ. Պօլսոյ գնաց , իրեն փոխանորդ թողլով զյարգոյ Յօհաննէս էֆէնտին Պ. Աքճալբեան՝ զառաջին թարգմանն Պարսից հիւպատոսարանին :

—Այս—Ս.Ֆի. կոչեցեալ անդղիական շոգե. նաւուն մէջ , որ յայտմ շաբաթու հասաւ 'ի Կ. Պօլսոյ , քսանի չափ վանեցի Հայ գաղթականք կը գտնուէին ընդ առաջնորդութեամբ ամերիկացի հոգեւոր հովիւի միոյ : Սուքա առաջին Հայ գաղթականքն են՝ որք կը մեկնին յԱմերիկա երթալու : Աստուած հետեւին ինի :

—Ի Կ. Պօլսոյ հինգշաբթի օրն արձակեալ հեռագիր մի կը ձանուցանէ թէ Ռուսք երեքշաբթի օրն Բէլձիայի Արևելեան կողմն եղած գիրքերուն վրայ յարձակելով՝ նորէն յետս մղուեցան մեծամեծ կորուստներով :

—Լնտօնի Տէլի Նիւս օրագիրն զհետեւեալ հեռագիրն կը հրատարակէ՝ արձակեալ 'ի Բէլձիայի Սեպտ. 14—26 ամսաթուով :

Երէկ գիշեր նախարարայ փորձողոյն մէջ երկար վիճաբանութիւն և քննութիւն եղև 'ի վերայ խնդրոյն թէ հարկ է արգ.օք հաշտութիւն ընել կամ շարունակել զպատերազմն : Կոստանդնուսիս Մեծ—Դուքսն և զինուորական գործոց նախարար Միլլաթին զօրապետն պատերազմին շարունակութիւնն ինդրեցին . իսկ միւսեալ նախարարն արժան համարեցան որ խաղաղասիրական բանխօսութիւնք լինին :

—Թիֆլիզէն արձակեալ հեռագիր մի կը ձանուցանէ թէ Ռուսական զօրաբաժին մի քաղկացեալ 'ի 20.000 զինուորաց՝ հասաւ էյլէքսանդրուպօլսիս 'ի 3—15 ամսոյս , ուսկից պիտի երթայ յօգնութիւն զօրաբանակին Լորիս Մեքլեքի զօրապետին :

—Ի նամակ միոյ՝ ընդունելոյ 'ի մէջ 'ի Կալկաթայէ , քաղեմք զհետեւեալ վշտալի տողսն .

«Ձիք նորութիւն ինչ արժանի ծանօթութեան բաց 'ի սովուն տիրելոյ 'ի կողմանս Մատրասայ . ուր բերաւորք սովամահ կորնչին : Տեղական իշխանութիւնն չբաւէ ունել զառաջն . ուստի զինի մեծագումար գրամս ծախելոյ 'ի պարէնս և յուտեստ ժողովրդոց , սկսեալ է այժմ հանգանակել 'ի հասարակութենէ սուրս կարեկցութեան : Տէր 'ի բարձանց տացէ զմանապէս շնորհաց և ողորմութեան , ապա թէ ոչ՝ ընդունայն են հայթայթանք առն արարածոյ» :

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ

Բամպակին կացութիւնն քիչ մի լաւացաւ և գիներն հաստատուն են : Մեքենայով մաքրուած բամպակին արժէքն 340—348 զուրուշ է առ կենդինարն և Ատանայինը՝ 330 :

Աֆիօնէն այս շաբթու գրեթէ 280 կողով վաճառեցաւ 131 և 134 զուրուշով առ չէքին , գլխաւորապէս վասն Ամերիկայի : Այս տարուան հունձէն մինչև ցայսօր 4200 կողով աֆիօն հասած է 'ի չուկայն մեր , և գրեթէ 2200 կողով վաճառուած է :

Փայլամուտն , տորոնն և ոչխարի բուրդն յանգործութեան գտանին :

ՍՄԵՆՈՒՅՈՒՄ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՌՎԱԺԱՆՑ ՉՄԻՌՆՈՆ

Société des quais de Smyrne.

ՍԶԳ. ԱՌ. ՎԱՃԱՌԱԿԱՆՍ

Ամսոյս 19էն (Հոկտ. 1էն ըստ նոր տուարի) սկսեալ՝ ծովափանց ընկերութիւնն կարող պիտի լինի Դրամվէյի միջոցաւ փոխադրել 'ի ներքին կողմանց Այտքնի երկաթուղիով հասած ապրանքը՝ առանց վաճօն փոխել տալու վաճառաց բեռնաւորելոյ 'ի ներքին քաղաքս և առանց փոխադրութեան աւելի վարձք պահանջելու :

Յարգոյ վաճառականքն , որք կուզեն օգուտ քաղել այս գիւրութենէն , պարտին յառաջագոյն գիմել թէ 'ի կայարանն երկաթուղոյն Այտքնի 'ի Բուսթա , և թէ առ ընկերութիւնն ծովափանց :

Ջմիւռնա , 13—25 Սեպտ. 1877

ՆԱԽՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՒՆԵԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի պէս նախախառն Դաւիթ Մարգարէ

ԿՐԹԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՒՆԵԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի պէս շաբաթաւ Դաւիթ Մարգարէ

ՅՈՐԴԵՆԱՅ

Տ. ԽՈՒՐԵՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ. ՊԷՅ

Առաջարկութեամբ և վաւերացմամբ

Ալֆայի Կրօնային Ժողովոյ

Տպագրեալ հրամանաւ

Տ. ՆԵՐՍԷՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՕԼՍՈՅ

Մեր վարձարանաց ք. նախախառնարանի ե. ք. զարգացեալ դասուց աշակերտք միեւնէ հիմայ զուգնայնայիս քրիստոնեական մը որ կարող ըլլար նոցա մտքերը գոհացոցից կերպիւ յուսաւորել Կրօնի վարդապետութեամբն՝ ու սրտերին կրթել խաղաղասիրական սկզբունքովն :

Այս պակասը լեցնելու համար Ազգային կեդրոնական վարչութեան Կրօնական Ժողովը խնդրած է գերա . Տ. Խորեն Ս. Արքիպիսկոպոսէ՝ Նար—Պիլ յարմարագոյն դասագրքեր յօրինել , որ բոլոր դպրոցաց մէջ եւ ամեն դասատուաց ձեռքը կրօնի եւ բարոյական անաշնորոգ գործիքներ լինին , աշակերտաց համար ալ նրահանգից լինելու ամեն հանգամանքն ունենան :

Կրօնական ժողովոյն փափաքը լիովին կատարեցաւ . եւ ինչպէս որ այս գործոց սկիզբը կը տեսնուի , ամենապատիւ Սրբազան Պատրիարք հայրն ու կրօնական ժողովոյ Բնիկ Զանգախումբն իրենց գոհունակութիւնն յայտնելով՝ կը վկայեն միանգամայն քե , քաջասունմ Հեղինակի գործերն ամենեւեմ խմածայն են վարդապետութեան եւ աւանդից Հայաստանաց Ս. Եկեղեցոյ , նոյնպէս եւ տպագրութիւնն նոցա օգտակար յոյժ 'ի փառս Հայաստան Եկեղեցեաց եւ յուսման մեծ ուխտի մանկանց վարձարանաց ազգիս :

Այս գովեստները բաւական երաշխաւորութիւն են քե Սրբազան Հեղինակին իրական արժանեաց եւ քե սոյն դասագրքը խմամբ եւ ընտրելուցոյն ճշով յորինուած ըլլալուն , որոց համար՝ իբր տեր—հրատարակիչ՝ չխնայեցին ոչ ծախք՝ ոչ աշխատութիւն , որպէս զի այս գրքերն յարմարաւոր պատկերօք եւ վաղեմէ տպագրութեամբ ի յոյս ընծայուին :

Քաջայոյս եմք որ այս քրիստոնեականներն Ազգի ընդունելութեանց պիտի արժանանան , մանաւանդ Կրթական , որ ոչ միայն Կարգացալ՝ ալ ընդհանրութեան եւս կարի օգտակար պիտի լինի . քանզի ընտանեկան ընտիր հրահանգներ կը պարունակէ . որոց միջոցաւ միայն կրնանք յուսալ՝ քե օր մը մեր տունքը նախնական դպրոցաց նմանելով՝ պիտի կարենան գոհ գրնաց քայլել վարձարանաց հետ եւ անոց ընթացից նպատակ : Լուսաւորեալ ազգերն այս միջոցով գարգացան որ ցարդ անոր օգուտներն ալ կը վայելեն :

Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Խմբագիր—տէր լրագրոյս ,

Ղ. Լ. Գ. Պալատական

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ